

թին վրայ չմտածելով, քակեց զօտին և կրակին ջուլ վերարկուի մը վրայ պտակեցաւ : Գեղեցիկ բայց նիկար երիտասարդ մըն էր, սեւ մազերով, արծուոնն : Դէմքն ազնուական, և աչքերը յանդուզն արիութեամբ կը վառվէին : Խիս պիտերը և երկար ժամանակ չածիլուած մօրուքը՝ գէմքին լըջութիւն մը կու առչին, որ տարիքին չէր համապատասխաներ :

Նոյն ասնն ծառաներէն երկուքը ընթրիքը պատրաստելու ետեւէ էին : Նոր մութուած ոչխար մը կրակին վրայ դրուեցաւ : միեւնոյն ժամանակ ուրիշ մը՝ ճարտար կերպով վայրի այժ մը կը քերթէր : Գուրս հանեցին շատ մը նոյն օրը որսացուած լըբամարդիներ և արօսներ :

Բոցը կը ճարճատէր՝ չորս կողմը լուսոյ շրջանակ մը տարածելով : Գեղտինը պտուկողը կամաց կամաց ինքերին կու գար : վայրկեան մը աչքերը զինքը շրջապատող անծանօթներուն վրայ դարձուց. ապա փորձեց վեր ելլալ : Քիչ մ'առաջ սպային հետ խօսող զինուորը՝ բռնելով թեւերէն՝ զինքը վեր վերցուց, ուրիշ մը ձեռքը նիզակ մը սուսաւ, որուն վրայ ուժով մը կոթնեցաւ : Դեռ երեք կարմիր էր և երակներն ուռած :

— Օղի՛ — ըսաւ մեղմ ձայնով մը :

Անիջապէս օդի բերին իրեն . անյազարար խնելով՝ կարծես ակելի լաւ զգաց ինքզինքը : Սրուակը շրթուներէն հեռացնելով՝ ակելի որոշ ձայնով մը հարցուց .

— Որո՞նց ձեռքը կը գտնուի :

Տեղակալը սաք ելաւ և անոր մօտեցաւ :

— Ջրեղ ազատողներուն ձեռքը :

— Դուք չէք ուրեմն հանդոյցը վիզս նետող :

— Մենք հանդոյց չենք գործածեր, այլ սուր : Հարցմունքը նախատինք է մեզի. դուն աւազակաց խումբի մը ձեռքն ինկած էիր, և եթէ կ'ախորժիս տեսնալ զիրենք՝ ահաւասիկ հոն փառուած են, մորթուած ոչխարներու պէս :

Այս բնելով՝ տեղակալը բլրան ստորտար պտակած դիակները կը ցուցնէր :

— Եթէ այդպէս է — պատասխանեց անծանօթը — թողուցէք որ թիչ մը հանցիմ, Եսրայարեկի Թրգ. 2. Ա. ԳՈՆՏԵՔՆԵՆ

# ՀԱՅ ՀԱՆԴԵՍՆԵՐ

ՄՈՒՐՃ, (ԹԻՒ 10, 1905).

Ամսաթերթս ընդհանրապէս վիպակով մը կը բանայ իր համարները, և ընդհանրապէս ալ վ. Փափազեանը կ'ըլլայ գրողը : Այս անգամ մեզի ներկայացնել կ'ուզէ զիւղական պատկեր մը, վերնագրուած խոյր որ « յաջորդ համարում » պիտի վերջանայ . Բագմակիս ալ թերեւս գալ համարին մէջ անոր վերլուծութիւն մը տայ : Վիպակիս կը յաջորդեն բանաստեղծութիւններ, արձակ կամ ոտանաւոր, ինքնագիր կամ թարգմանածայ, ինչպիսի է Գոս կը հակեցնեն, իսկ ես կը վստեմ, որոնք մեծ ու լուրջ յօդուածներու միջնարարներն են : Եւ իրաջնէ շահեկան յօդուած մըն է Բ. իշխանեանի Տեոտեսկան զարգացման փազերը. բայց ինչ որ անախորժ կ'ընէ ատոր ընթերցումը՝ օտար բաներու անխտիր հիւրընկալութիւնն է : Վերնագրին երեք բառերէն մէկը՝ ֆաղ, այլազգի է. այս համեմատութեամբ գումարեցէք 16 էջ յօդածի մը մէջ եղածները, շուտով ահագին քանակ մը կ'ունենանք : Ի՞նչ աստիճան հայերէն է հասուած մը՝ ուր հինգ վեց սող անկամ մը՝ զիմացդ կ'ըլլեն սաստեմ, ստարիկս, պերսեանայ, մասսա, ինտեկ, կապիտալ, կոմբինացիա, տեխնիքական, ֆունկցիա, ակրիկոպրոպրա, ֆեոզայ, սխտեմ, սիպիքական, պրոցես, սոցիալական . . . և ասոնց նման դեռ ուրիշ շատ ձայնի :

Լուսանագի Արձագանքի օրով, Բագմակիս և ուրիշ թերթեր՝ ամէն ձեւի սակ բողոքեցին այս օտարամուլթեան զէմ. բայց կ'երեւի թէ ամէն սերունդի պէտք է ատանձին յանձնարարել : Ինչ որ ազգը հին ու յարգի բան մ'ունի՛ իր լեզուն է. պէտք չէ որ թիչ մը ակելի ակնածութեամբ վարուինք անոր հետ : Դեռ չորցած չեն այն զբաղեցները որ թափուեցան, մինչև որ վերք—Հայաստանիին ու Գեղ կենացին լեզուէն, այսօրուան հայերէնին հասանք. Ինչ պիտի ըլլայ վառտակ.

նիս, եթէ աքսորուած արեւելեան բռնորուն տեղ՝ արեւմտեանները հիւրընկալենք, Պէտք է խոստովանիլ որ արեւմտեան հայերն հիմայ աւելի ուշ կը դնեն լեզուի հարազատութեան ու գտութեան քան արեւելեանները ։ Ռուսահայերը վէպի համար միայն հայերէն մ'ունին . զոր անբաւական կը գտնեն գիտական ճիւղերու մէջ ։ Բայց չեն զգացեր երբէք որ մեր լեզուի կազմութիւնը ընդունակ է ամէն գաղափար իր մէջ ցանցելու ։ Պէտք է միայն գրել կամ թարգմանել յառաջ՝ աշխատիլ զայն սովորիլ, զայն գարձնել գիտնալ, զայն ճարտարագետել, ինչպէս կ'ըսէր Նազարեանց ։ Ռւբակական է տեսնել որ իրենք իսկ, ռուսահայերը, կը զգան աւելի զուս հայերէն մը գրելու պէտքը ։ Մեծարգ . Էմմանուէլ քահանայ Նազարեանց, Լեզուի հարցը բերուիլն մէջ, սրտառու թողորներ ու յանձնարարութիւններ կ'ընէ . Մարտ իր այս թիւին մէջ իսկ՝ շատ իրաւամբ քննադատելով ասոյղագրութիւնները ուղղագրութիւնը՝ կը գրէ . « Թող ներուի մեզ նկատել, որ ուղղագրութեան հարցերում մենք գտնուած ենք բժ . Վ . Արժոնտուն անկոմպետան (անձեռնչատ) . նա չպէտք է իրան թող սար քմահան նորմուտութիւններ անել Հայոց լեզուի ուղղագրութեան մէջ . այլպիսի հարցերի լուծումը պէտք է դիպեալատան (չոս՝ յաւակնոս) յեֆոյմատորներ (բարենորոգող) անձնակազմի ճաշակից գուր լինի, եթէ չենք ուզում Բարեկոնական խառնակութիւն և քսոս ստեղծել մեր ուղղագրութեան մէջ » ։

Տոգորուն այսպիսի բարի զգացումներով, յոյս կու տան՝ որ Մեծարգ . Էմմանուէլ ֆահանայն ալ, Մարտն ալ, այսուհետեւ թող պիտի շաան, գէթ իրենց գրչին, անխտիր և առանց հարկի օտար տարրերով արատաւորել լեզուն ։

Աւելի մաքուր հայերէն է Անցելայի հարցերից, զոր Լէօ կը ստորագրէ ։ Սոյն յօդուածին մէջ Երեւանի ինչ ինչ արձանագրութիւնները կը հետեցնէ Լէօ թէ Հայաստանի մէջ ալ ճորտութիւն կար Միջին Գարեբուն ։ Ահա աւստի նոր գաղափար մը զոր ազգային պատմութիւն գրող մը այլ ևս ուշագրութեան

պէտք է անէ ։ Լէօ այս հատուածին յառաջաբանին մէջ կը զգացնէ թէ ազգային նոր պատմութեան մը պէտք կայ . որովհետեւ « Չամչեանի պատմութիւնը ճնց հնութեան, միամտութեան, անստիղծակութեան կողմում » ։ Իրացնէ նոր քննութիւնները, անդրադարձութիւնները, պեղումները, արձանագրութիւնները, նոր գտնուած վաւերագրութիւնները այնքան շուտ գիրար կը մոտցնեն՝ որ ոչինչ նոր կը թողուն ընդ արեղակամբ ։ Ռստկոտուրք բան մը կը զգայ մարդ՝ երբ կանխազգեցութիւնը կ'ունենայ՝ որ արդի պահանջներուն համեմատ դրուած պատմութեան մը համար ալ, քննադատ մը, իրերես և ոչ կէս պար վերջ, գրէ « Ճնաց հնութեան, միամտութեան, անստեղծակութեան կողմում » ։

ՀԱՆԻՏ ԱՄՍՈՐԵԱՏ, 1905,  
(ԵԻ 10-11).

Հ. Տաշեան՝ արշակունի դրամներ յօդուածին շարունակութեան մէջ քննութեան կ'առնու խորեանցոյ ժամանակագրութիւնը, զոր կու տայ Պարթեւաց ։ Եւ ճիշդ կը գտնէ զայն՝ հակառակ Գարազաշեանի ։ Յետինս խորեանցոյ բացատրութիւնը՝ թէ « Եւ եղև յևս մահուանն Աղեքսանդրոս . . . Մատայեցի Պարթեւ Մակեդոնացոց ամս ԿԼ » բուն Աղեքսանդրի մահուանն՝ 323էն կը սկսի հաշուել, մինչ Տաշեան Սէն-Մարթէնի և ուրիշներու հետ կ'ապացուցանէ թէ այս բացատրութեամբ Ալեքսանդր թուականը կը հասկնար խորեանցի, որ 313ին կը սկսէր . Ե . Գ . ։ Հատուածը կ'աւարտի այս ամփոփումով թէ « նաեւ հայ գրականութեան մէջ, ուր շատ բազմաթիւ են ասորերէնէ թարգմանութիւնք, երբ կը հանդիպիք թուականի մը՝ որ Աղեքսանդրի հետ կ'ապ մ'ունենալ կը ցուցնէ, որեւէ պէտք չկայ բառացի տանլով խօսքը՝ կ'ապելու զայն ոչ Աղեքսանդրի թագաւորութեան, ոչ տիեզերական լուծեան, ոչ մահուան և ոչ ուրիշ թուականի մը հետ . այն ընդհանրապէս և սովորաբար Ալեքսանդրն է, որ Աղեքսանդրի կը համարուէր Աստուծոց քով » ։

Սոյն թիւին սկսած է անանուն մէկը Եղիշէի վրայ քննական ուսումնասիրութիւն մը հրատարակել, որ կ'երեւի շատ ընարձակ պիտի ըլլայ: Գործը տաս տարի յառաջ պարասուած է. և այսօր միայն կը սպուի. այս ժամանակին մէջ Եղիշէի վրայ բազական ուսումնասիրութիւններ եղան, այնպէս որ տաս տարի յառաջ եղած աշխատութիւն մը կրնայ հնցած համարուիլ: Ու խմբագիրը փոխանակ փափաքելու որ ներկայ ուսումնասիրութիւնը վերստին ձուլուէր, կը մտածէ որ « անշուշտ առաջնութիւնն այս գործին է այն բոլոր նորութեանց և գիւտերուն մէջ որոնք այլեւայլ կողմերէ առանկ կամ նուազ չափով եղան այս տասը տարուան ընթացքին մէջ Եղիշէի մասին, — բնականապէս իւրորմէ անկախ»: Ներկայ յօդուածը կը գրադի մասնաւոր Եղիշէի ապագրութիւններով, և խոստումներով: Կը սպասենք տեսնել թէ իր նոր կարծիքները ինչ նոր փաստերով պիտի ապացուցանէ, մարգելով որ Սիսիփոսի աշխատութիւն մը չըլլայ ըրածը:

Հ. Ն. ԱՆՏԻՆԿԵԱՆ

1180 (թիւ 42-44).

Լոյսի խմբագրութիւնը՝ ամէն թիւի սկիզբը իր ուղղութեան արժանատի և համընթաց խմբագրականներու առիթ կը գտնէ. այս անգամ Չորս անտարակցիներու տունիս առթիւ է: Մեծ. յօդուածադիրը ի վերջոյ Չեռագիր անտարանաց նկարներու և զարդանկարներու վրայ խօսելով կ'ըսէ. « Մեր Մուկիդները թէև հետևած են բիզանդական արուեստի », և այլն. մինչև հիմապուստ սովորական եղած բացատրութիւնն է այս: Պրոֆ. Սաշլիովսկի, որ Եւրոպայի մէջ ծանօթ և նշանաւոր մասնագէտ մ'է հին ճարտարապետութեան և զեղարուեստի՝ Մլքէ Ա-

ւտարանի պատկերաց վրայ ըրած ուսումնասիրութեամբ՝ ցուցոց թէ ասորական աղբեցութիւն եւս կրած են հայ նկարողը և իրենց եզականութիւններն ալ ունին: — Յ. Միլիտիլուս կը շարունակէ Շարականատարակը (յէջ 1002), որով կրնայ պակաս մը լեցուցած ըլլալ. բայց մանր քննութիւնը կը պակսի, և բնական ալ է. առանց Չեռագիրներու ճոխ հաւաքածոյ մ'ունենալու՝ կարելի չէ վերջնական որոշումներ տալ: Հոն Մեծ. խմբագիրը Անճիբը բառին ծանօթութիւն մը կը գտնէ. կ'անդրադարձնէ թէ Ալլարեանական ս' և է շարական Անճիբը կը կոչուի, և կը յարէ. « Գրեճ ըսուած քարոզներ ալ այդպէս են: Մ. Գրիգոր Նարեկացին՝ Գրիգոր ծայրանունով գրած է շատ մը քարոզներ, որոնք Գրեճ բառով կը սկսին. ասկից ուղղութիւն եղած է՝ համասեռ գրուածներուն Գրեճ անունը տալ »: « Նոր Հայկազեան » եւս այդ մեկնութիւնը կու տայ. Հանդէսիս նախորդ թիւին մէջ (1905. դեկտ. էջ 558) խօսած եմ այս մասին՝ որ սիւալ մեկնութիւն մ'է այդ, մանաւանդ այնու որ Նարեկացոյ ընծայուած այդ Գրեճերը՝ արիշ Գրիգորի մ'ենն: — Պրոֆ. Կարեղայ կը շարունակէ Եկեղեցական յաւեր և ստացումները. ինչ որ կ'ենթադրուի՝ ծիսական բառերը մը ձեւ պիտի առնէ (շարունակութիւն և ի թիւն 43):

— (Թիւ 43). Սյր. Եղիշէ կ'սկս. Գրեճը՝ Հնճեան խորագրով կը պատասխանէ « Պոստոսի թղթակցի » մը, որ Բիւզանդիոսի (2764) մէջ՝ Ներսէս Շնորհաւոյ երգերու Սրբազանին աշխարհաբար թարգմանութիւնը քննադատած էր. չէր յուսար անշուշտ այդ քննադատը՝ թէ պատասխանի ալ պիտի արժանանար. ատով թող միթարուի: — Գր. Հ. Գալուստեան ունի երկու կրօնական բերթուածներ, զպայմամբ գրուած:

Ինչ մէջ յարտարեց՝ որ Գր. Նարեկացոյ ընծայուած Գրեճերը՝ չեն կրնար Նարեկացոյ ըլլալ: Մեծ. Ա. Չապոնեանի այդ անդրադարձն խնդիրը շահեկան ըլլալէ զատ՝ պիտի վկայէ թէ ինքը յերաւի թագանցած է Նարեկացիին ոգին:

1. Տես Հանդէս Ամսօրեայ, 1905, թիւ 2.  
2. Նրա առնել է վեր անդրադարձն էր այս. և այս իման վրայ Նոր Հայկազեանի Գրեճ բառի այդ մեկնութեան համարու եղած չեմ: Երբ եկեղեցական բանաստեղծներուն գրածամ՝ պիտի ապացուցանեմ այս: Անճիբի խմբագիրը Ա. Չապոնեան վերջին 10-11 թիւ:

— Յովն. Ասոց քահանայ Մկրտեան կը վերջացնէ բաւական ատենէ ի վեր սկսած սա խորագրով աշխատութիւնը. « Ս. Գրոց ընթերցանները Հայ եկեղեցւոյ մէջ » : Բնական է՝ սպազորութեան սխալ մը պէտք է համարել « Յուզայի կարողիկոսիկը » (յէջ 1044) փոխանակ կարողիկեայց : Անշուշտ պիտի շարունակէ բանասէր Մկրեան հայրը « Երկրագունտի » մէջ սկսած Ազգային երչխարք խորագրով՝ միջնադարեան տաղերու հրատարակութիւնը. այս մասն ալ կը խընդրենք Լյայէն :

— (Թիւ 44). Տօքթ. Յ. Թօփանեան կը վերջացնէ այս թուով իր երկար, հետաքրքրական Մատենախօսականը (Հայ և Առորի եկեղեցիներու յարաբերութիւնները) : Յօդուածը կը վերջանայ՝ Օձնեցոյ խնդիրը առկա չմնացած. « (Մանակկերտի կանոնները) խիտ հարկաւոր են ... Յովհան Օձնեցոյ անհերքելի կերպով հակաբողիկոսական ըլլալը ապացուցանելու համար, զոր Չամչեան, Սարգիսեան, Աքինեան (անշուշտ \*Կ. Ա.) իբր քաղկեդոնիկ կը ներկայացնեն » (երես 1058) : Յ. Թօփանեան, ինչպէս ուրիշ անգամ՝ ներկայ յօդուածին մէջ գրած է՝ Օձնեցոյ հակաբողիկոսական ըլլալը հիմնած է Գիրք բղրայ՝ « Սակս ժողովոց » ի վրայ, որ Յովհ. Օձնեցոյ ընծայուած է : Սակայն այդ երբէք կարելի չէ Օձնեցոյ վերագրել, և արդէն Հանդես Անօրեայի մէջ հմտութեամբ զօտորովի ուսումնասիրող \*Կ. Ա. անգրագարձուց այլ, առանց երկարելու : Եթէ Յ. Թօփանեանը զեռ այդ համոզման մէջ է, և այդ « Սակս ժողովոց » ը Յովհան Օձնեցոյն գրուածքը կը համարէ՝ շատ գիւրին պիտի ըլլայ հերքել անոր վաւերականութիւնը :

— Մրք. Եղիշե եպ. Դուրեան ունի Տէր Յիսուս քերթուածը՝ որ հակադրութիւնն է ճշմարտութեան և մղորտութեան՝ Յիսուսի կեանքին մէջ նկատուած :

Շատ հետաքրքրական է Յովն. Դամասկոսոյ Հայոցս վրայ գրածը՝ զոր կը հրատարակէ Լյայի գիտնական խմբագիրը Բաբգէն վարդապետ : Բանասէրք անհամբերութեամբ պիտի սպասեն անոր վերջնադրուին :

Վերջանելով մեր տեսութիւնը՝ գիտել կու տանք ընթերցողաց՝ որ Լյայը իր առջին շրջանը կատարեց՝ առջադրած ուղաւորէն համաձայն. կը բաղձանք որ լուսաւորէ նա Արցախի Ապագային համար, լուսաւորելով նաեւ Գաւառացի թղթակիցներէ :

ԱՐԱՐԱՏ (Հսկու.)

Այս անգամ Արարտի Յաւելուածը (էջ 943-968) Դրոսեան Արտեմ վ. ստորագրուած է. նիթն է « Կանոնք Ներսիսի կաթողիկոսի և Ներշապուհոյ Մամիկոնէից և Կարկոպոսի » : Կանոններու հրատարակութիւն մը՝ Չոտագրաց խցմամբ բազմաատութեամբ : Առանց այսպիսի հրատարակութիւններ ընելու՝ շատ անհիմն պիտի ըլլայ հայ եկեղեցոյ իրաւագիտութիւն մը կազմել :

Այս թուոյն մէջ հրատարակուած 38 կանոնները Ներսես կարողիկոսի և Ներշապուհոյ Մամիկոնէից եպիսկոպոսին անուանց ներքե են : Այդ Ներսես կաթողիկոսը՝ Ներսես Բն է, որ ապրեցաւ վեցերորդ դարու կիսուն և Գուրինի մէջ ժողով մը գումարեց : Ներսէսի կաթողիկոսութեան թուականը ըստ Հ. Չամչեանի 524-533 է. իսկ վերջին ցուցակներուն համեմատ 548-557. վերջինս այնու աւելի հաւանական է՝ վասն զի Ներսէս իր մէկ թղթոյն մէջ կը գրէ. « Գիտութիւն լիցի սրբութեանդ ձերում՝ յազազս հոգեւոր վտանգիս սր եհաս մեզ յանիծեալ նետարականաց, քսան և հիկեբորդ (ամի) խոտորով արքայից արքայի » : և խոտորով Ա 531ին կը գահակալէ որուն, 25երորդ տարին է՝ 556 թուականը :

Յովհաննէս Օձնեցոյ ընծայուած անվաւեր գրութիւնը՝ « Սակս ժողովոց սր եղեն ի Հայք » , սա սողերը սնի. « ի սկզբան թուականութեանս Հայոց, վեցերորդ ժողով արար Տէր Ներսէս ի Գուրի, ի շորբորդ ամի

1. Ա. Ա. Զեւարդեք, Ինչպէս և Գիրք բղրայք ունին Մերայառնէ :  
 2. Տես Գիրք Թղթոց, էջ 76 :  
 3. Տես Գիրք Թղթոց, էջ 221 :

կաթողիկոսութեան խրոյ, և ի ի՛ր ամի թա-  
գաւորութեանն խոսրոյլու արքային Պարոնց,  
և ի թ՛ր ամի Յուսահինանոսի կայսեր: Չայս  
ժողով արար Տէր Ներսէս, Հակառակ ժո-  
ղովոյն Քաղկեդոնի», և այլն: Այս գրու-  
թեան Համաձայն 555ին կը գումարէ Ներ-  
սէս՝ Դուինի ժողովը (խոսրոյ Ա 531 +  
24 = 555) ըսել է 551ին (և ո՛չ 548ին)  
կաթողիկոս կ'ընտրուի, քանի որ 555 թուա-  
կանը իր կաթողիկոսութեան շորրորդ տա-  
րին է: Յուսահինանոս Ա կը գահակալէ  
527ին, որուն չորեքասաներորդ տարին կը  
Համապատասխանէ (527 + 14 = ) 541,  
երբ զեռ Ներսէս Բ. և ոչ իսկ կաթողիկոս  
ընտրուած էր. ուստի այս անվանք թուողիք  
երբէք պիտի չկարոնայ լուսաւորել այդ  
գարու պատմութիւնը և խնդիրները, քանի  
որ Ռանցեւոյն գրուածքը չըլլալուն Համար՝  
միշտ սխալը սխալին կը յարողէ: Եւ որով


կարելի չէ երբէք այս գրութեան վրայ հի-  
մնուած ըսել՝ թէ Ներսէսի Դուինի մէջ բ-  
րած ժողովը՝ Քաղկեդոնի Հակառակ էր:

Մեծիք-Թանգեան եւս « Հայոց եկեղե-  
ցական իրաւունքը » գրքին մէջ (էջ 366)  
Համամիտ է Հ. Չամչեանի, և զորաւոր պատ-  
ճառաբանութեամբք կը մերժէ այն ըսուած-  
քը՝ իբր փէլ « Ներսէս Բ. ժողով գումարած  
ըլլայ Դուինի մէջ՝ Հակառակ Քաղկեդոնի »:

Արսէն Վ.ի Հրատարակած կանոններուն  
մէջ զեռ կը յիշուի Ազգայի գործածութիւնը,  
Ռշապուրութեան աննշու կէտ մ'է Բաժակի  
մէջ չար խասակոտ խնդիրը. Չ և է կանոննե-  
րուն մէջ Բաժակի յիշատակութիւն կայ՝ ա-  
ռանց արգելելու չար խասակը. Հայկական  
եկեղեցին ինչպէս կ'ըսուի՝ Հնուց ի վեր չարք  
Հեռացուցած է պատարապի բաժակէն. այդ  
բարձման Հնութիւնը ո՛ր կը Հասնի արդեօք:  
— Այն ատեն այդ նախաջըմանը պիտի  
գծենք՝ երբ կանոններու Հաւասարիմ է վա-  
ւերական օրինակաց Հրատարակութիւնը կա-  
տարուի:

1. Հմտ. Հ. Մեք. Չամչեանի Պատմութիւնը (տ. Թ. էջ 493):  
2. Տգ. Ի Եռշէ, 1903:

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ



**ԻՄՐԱԳՐԱԿԱՆ**

ՏԻՐՈՅԱՆ Հ. Ա. — Չար Զանգեր . . . . .	1
<b>ՀԱՅՎԱԿԱՆ ԺԵՄԱՐԱՆ (Քուրաւածք).</b>	
ԱՍՏՈՒՐԵԱՆ Հ. Յ. — Եղեշէի Պատմութեան նա- բազիւս Հատակադրներ . . . . .	7
ԱՆԿՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Լեզուաբանական քրոնիկ . . . . .	10
ՊՈՏՈՒՐԵԱՆ Հ. Մ. — Միջնադարեան բանաստեղծ- ներ. — Մկրտիչ Նկարագիր կամ Նազաշ . . . . .	12
ՍԱՀԱՐԵԱՆ Հ. Կ. Տ. — Յովհաննէս Չժէկէկ . . . . .	16
ՏԻՐՈՅԱՆ Հ. Ա. — Հայագիի Համալսարանական ընթացաւարաց . . . . .	24

**ԳՐԱԿԱՆԱԿԱՆՔ**

ՅՈՎՍԵՓԵԱՆ Հ. Ա. — Անշլխայի Մասնաւորներ
--

Իննեւասաներորդ Կարու. — Սկստ. — Քիչոս.	
— Ռաճէրս . . . . .	26
ՏԻՐՈՅԱՆ Հ. Ա. — Թարգմն. ՏՈՐԿ. ՏԱՍՍՈՅԻՒ Ա- գառուաճէ Երուսաղեմի դեցաղեական քերթու- թեան Գ. Երզն. — Խաչակիրք Երուսաղեմ կը նսանի. — Սկիզբ սիրոյ ցրտացններու. — Առաջի խանութքը պատերազմին . . . . .	29
ՊՈՏՈՒՐԵԱՆ Հ. Մ. — Մեծնոց օրը (Նոյեմբեր 2). Գերեզմանական տեսարաններու առջեւ . . . . .	37
ԳՈՆՏԱՒԵՃԵԱՆ Հ. Ա. — Սրով ու Հրով. Քարգմա- նութիւն պատմական վիզաւանութեան ՀՆՆ- ՐԻԿԱ ՍԵՆԿԵՎԻՅԻ . . . . .	41

**ՀԱՅ ԱՆԿԻՏՆԵՐ**

ԱՆԿՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Մարմ. — Հանդէս Ամօրեայ . . . . .	44
ՊՈՏՈՒՐԵԱՆ Հ. Մ. — Լոյս. — Արարատ . . . . .	46

